

արտաքին տնտեսական և մասնավորապես՝ մաքսային քաղաքականության մշակման գործընթացներում, ինչպես նաև՝ մաքսատներում, արտահանման և ներմուծման գործառնություններ իրականացնող մասնավոր ընկերություններում, միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային կազմակերպություններում, լոգիստիկ կենտրոններում: Շրջանավարտները կկարողանան աշխատել ոչ միայն ՀՀ-ում, այլև ԵԱՏՄ անդամ մյուս երկրներում գործող մաքսային համակարգի կառույցներում:

Ուսման վճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է, ամբողջ ծրագրի տևողության արժեքը՝ 1 մլն. 50 հազ. ՀՀ դրամ, սակայն պետք է նշել, որ 2020 թվականի սեպտեմբերի 1-ից կիրառվելու է եկամտային հարկի միջոցով ուսման վճարի փոխհատուցման օրենքի համապատասխան դրույթը, որի միջոցով, շատ դեպքերում, աշխատող անձանց համար ուսումնառությունը կստացվի անվճար:

Մասնագիտության նկարագիր

Մաքսային համակարգում իրականացվող բարեփոխումներն իրենց բնույթով շարունակական են՝ պայմանավորված ոլորտի դինամիկ զարգացման և տնտեսական առաջընթացի արագ տեմպերին մաքսային համակարգի ինտեգրման անհրաժեշտությամբ: Մաքսային քաղաքականությունը՝ որպես արտաքին առևտրի կարգավորման առանցքային ուղղություն, մեծապես կախված է միջազգային առևտրի զարգացման միտումների փոփոխությունից և միջազգային ու տարածաշրջանային մակարդակներում ՀՀ ստանձնած պարտավորություններից: Այս առումով մաքսային համակարգի քաղաքականությունն մշակողները ՀՀ համապատասխան օրենսդրությունից գատ պետք է քաջատեղյակ լինեն միջազգային առևտրի կարգավորման սկզբունքներին ու առանձնահատկություններին:

«Մաքսային վարչարարություն» մասնագիտացման նպատակներից են՝ պատրաստել անհրաժեշտ վերջնարդյունքներով օժտված բարձրակարգ մասնագետներ, ովքեր ունակ են իրականացնել ՀՀ արտաքին առևտրի քաղաքականության մշակում և իրագործում, առաջարկվող միջոցառումների և փոփոխությունների ազդեցության գնահատում, մաքսային քաղաքականության շուրջ ՀՀ տնտեսության շահերից բխող բանակցությունների վարում՝ մաքսային քաղաքականության կատարելագործման նպատակով կիրառելով միջազգային առաջավոր փորձը: